



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1524

Коллекция Углич

Углич - Никола

Россиа, 1891

83

U-87

2011

2003

Բյուջեի և ֆինանսների նախարարությանը

83
U-87

Հրատ. թիվ. Անի, հայերէն զբ. քերէ հրատարակութեան

№ 29.

ԵՐԱՆԱՆԱՍՏԻՐԻ

Վ Ա Ր Դ - Բ Ե Ս Լ Ի Ն

Գերմաներէնից թարգմանեց

Ի. Յ.

28

Թ Ի Տ Լ Ի Չ

Тип. М. Вартаулица, Гановская ул. д. № 3.

Տպարան Անժոհոյ Վարդանեանի

1891

Ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնները վաճառ վում են Ընկերութեան գրասենեակում եւ «Կենդրոնական գրավաճառանոցում».—

| | |
|---|--------------|
| | Ռ. Կ. |
| 1. Թաւամազ մեղու, թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեան | — 40 |
| 2. Կարմիր լապտեր, թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեան | — 50 |
| Նոյնը առանց կազմի | — 30 |
| 3. Թովմաս եղբօր տնակը, թարգմ. օր Ն. Տէր-Մարկոսեան | — 60 |
| Նոյնը առանց կազմի | — 45 |
| 4. Մանկական երգեր, Գամառ-Քաթիպա | — 25 |
| Նոյնը առանց կազմի | — 15 |
| 5. Մորեխ եւ նրա ջնջկու հնարները. Հ. Տէր-Քարեղեանի. | — 10 |
| 6. Առողջապահական ընթերցանութիւն. Նեղ եւ խոնաւ բնակարանների մասին. Հ. Առաքելեանի | — 10 |
| 7. Սրբոյ Հօրն մերոյ Մովսիսի Խորհնացոյ Պատմութիւն Հայոց | — 80 |
| 8. Փոքրիկ ձեռնարկ Գործնական տնտեսութեան, Մօրիս Բլօքի, փոխադր. Ս. Պարսաճեանցի | — 50 |
| 9. Ռօբինզօնի պատմ. թարգմ. Գիւտ քհն. Աբանեանցի | — 60 |
| 10. Գամառ-Քաթիպայի բանաստեղծ. կազմ. Նոյնը առանց կազմի. | 1 20 — 50 |



Հրատ. Թեթ. Ընկ. Հայերէն գրքերի Հրատարակութեան

№ 29.

Ե Օ Հ Ա Ն Ն Ա Ս Պ Ի Ր Ի

Վ Ա Ր Դ - Բ Է Ս Լ Ի Ն

Գերմաներէնից քարգմանեց

Ի. Յ.

1002
6055



Թ Ի Ֆ Լ Ի Ձ

Тип. М. Вартамянца, Гановская ул. д. № 3.
Տ օ ր ա ղ ա ն Ս օ Վ օ Է օ Վ ար ք ա ն ե ա ն Ի

1891

ԳԼՈՒԽ Ի.

Վարդի ժամանակ:

Վիրքբախ գիւղի բնակիչ Ռիտրիխը, որ առաջ կանոնաւոր տուն ու տեղ ունէր, մի քանի տարի էր արդէն, որ տնաքանդ էր եղել եւ պաշտօնից ու սպրուստից զրկուել: Նրա միակ պարապմունքն այն էր, որ իր անմշակ արտից մի քանի փունջ խոտ էր քաղում ու իր լղար այծի համար ուտելիք տանում: Չաշին նա ու իր հոգեորդին մի քանի գետնախնձոր ու մի քիչ կաթ ունէին միայն: Չաշից յետոյ Ռիտրիխը դուրս էր գնում ու մէկ էլ երեկոյեան դէմ էր տուն վերադառնում, որ այժը կթէ: Յետոյ նրան էլ տանը չէր կարելի տեսնել, բայց ամենքը գիտէին, որ նա մինչեւ կէս գիշեր նստած էր պանդոկում: յայտնի էր նոյնպէս, որ շուտով նրա ձեռից կ'իլեն նրա տունն ու արտն իր պարտքը վճարելու համար: Քանի

որ նրա կինը կենդանի էր, ամեն բան լաւ էր գնում: Նրանք աւելի մեծ տեղ ու մի կով ունէին, իսկ կինը առաւօտուանից մինչեւ երեկոյ բարեխիղճ կերպով աշխատում էր: Նրանց որդի չէր եղել, բայց Կիտրիխի քրոջ մի որբ մնացած երեխան երեք տարի էր արդէն, որ նրանց մօտ էր ապրում: Մի տարի առաջ մեռաւ նրա կինը եւ այն ժամանակից սկսած նա այնպէս շուտ ընկաւ, որ ամենքը զարմանում էին՝ տեսնելով այն փոքրիկ որբ արջկան այնպէս թարմ ու առողջ: Նա հիմա արդէն ութ տարեկան էր եւ ամեն տեղ նրան Վարդ-Ռէսլի էին կանչում, որովհետեւ ոչ մի անգամ չէին տեսել նրան, որ մի վարդ չ'ունենար կամ ձեռին բռնած կամ բերանը դրած եւ կամ կրծքին ամրացրած: Ռէսլին — նրա իսկական անունը Թերեզ էր — այնչափ հաւանում ու սիրում էր վարդ ունենալ, որ կանգնում էր ամեն մի բուրաստանի առաջ եւ այնքան նայում իր ուրախ կապոյտ աչերով, մինչեւ որ այնտեղ եղած մարդիկը բարեկամաբար ասէին նրան. «ուզո՞ւմ ես մէկը»: Եւ Վարդ-Ռէսլին զմայլած մեկնում էր իր փոքրիկ ձեռք ցանկի միջից ու շնորհակալութիւնով ստանում իր գանձը: Ամենքն այդ երեխային միշտ վարդերով շրջապատուած էին

տեսնում, հէնց որ դրանք ծաղկում էին. ամենքն էլ ճանաչում էին ծաղկահասակ Վարդ-Ռէսլին ու սիրում: Նա իր մօրեղբորը շատ քիչ էր տեսնում: Առաւօտները նա ուսումնարան էր գնում, իսկ ճաշին մօրեղբայրը սովորաբար ասում էր. «երեկոյեան տուն չեմ գայ, այդտեղ ուտելու բան կ'գտնես»: Բայց պահարանը միշտ դատարկ էր. լաւ որ մի մի անգամ ուսումնարանում երեխաներից մէկն ու մէկը նրան տանձ, խնձոր եւ մի կտոր հաց էր տալիս. իսկ շատ անգամ, երբ քաղցած էր մնում, վազում էր դէպի այն այգիներն, ուր վարդի թփեր կային ու մի քանի վարդ ստանալով այնպէս ուրախանում էր, որ ամեն բան մոռանում էր:

Այսօր էլ նա երեկոյեան ուտելու բան չ'գտաւ, բայց ուրախ ուրախ թռչկոտում էր մարգագետնի վրայ: Ամերային պայծառ երեկոյ էր: Թիթեռնիկները պարզ օդի մէջ վերեւ ու ներքեւ էին անում, ծիծեռնակները բարձր էին թռչում պտոյտներ անելով ու ծլլում, իսկ չորս կողմը, մարգագետնի վրայ ծղրթներն այնպէս ուրախ էին ձրձրձում, որ Վարդ-Ռէսլին հետզհետէ աւելի զուարթանում էր ու աւելի բարձր էր թռչկոտում, կարծես թէ ու-

դում էր թիթեռնիկների հետ վերեւ թռչել։ Այդպէսով նա կարճ ժամանակից յետոյ հասաւ դուրսը, անտառով ծածկուած բլրակի մօտ գտնուող այգին, ուր ամենից սիրուն վարդերն էին ծաղկում։ Այգին շրջապատուած էր փայտեայ ցանկով. Վարդ-Րէսլին շտապով բարձրացաւ փայտի ստորին աստիճանների վրայ ու կարօտով նայում էր այնտեղի վարդերին։

«Ներս արի», կանչեց մի ձայն ծառերի ետեւից. «գիտեմ թէ ի՞նչ ես վնասուում. այսօր վարդ կ'ստանաս»։

Վարդ-Րէսլին չ'սպասեց, որ նա երկրորդ անգամ ասէ, շտապով ներս գնաց ու դիմեց ուղիղ դէպի անուշ հոտ բուրոզ վարդի ածուներն ու նայում էր զարմացած այն բազմաթիւ կարմիր ու սպիտակ, մուգ ու պայծառ ծաղիկներին, որ խառը շողում ու բուրում էին։ Այժմ առաջ եկաւ այդու տէրը, նախագահի ամուսինը. սա էր, որ Րէսլին շատ անգամ վարդ էր տուել ու այժմ էլ ներս կանչեց։

«Այսօր լաւ ժամանակն ես գալիս, Րէսլի», ասաց նա, «դու մի ամբողջ փունջ կ'ստանաս. բայց տես, շատ վարդերի թերթիկներն արդէն թափուում են, դու պէտք է մի փոքր զսպես

քեզ ու այնպէս բարձր չ'թռչկոտաս, ինչպէս որ միշտ անում ես, եթէ ոչ՝ մինչեւ որ տուն հասնես բոլոր վարդերի թերթիկները կ'թափուին»։

Յետոյ տիկինը զգուշութիւնով սկսեց այս ու այն կողմից մէկ-մէկ վարդ կտրել. նա քաղեց թէ մուգ ու պայծառ, թէ կարմիր ու սպիտակ վարդերից այնչափ, որ մի մեծ, հաստ ու փառահեղ փունջ կազմուէց։ Վարդ-Րէսլին հետզհետէ չուում էր իր աչերը, որովհետեւ նա երբէք մի այսպիսի հրաշալի բան չէր ունեցել իր ձեռին։ Բայց հէնց հիմա այս ու այն կողմից թափուում էին բուրոզ թերթիկներն ու մերկ կոթերը մնում միւս վարդերի շարքում այնպէս տխուր, որ Վարդ-Րէսլին վախեցած նայում էր դրանց։

«Տեսնում ես», ասաց տիկինը զգուշացնելով, «շատ կամաց պէտք է տուն գնաս, թէ չէ՝ դրանցից երեքը հազիւ տուն կ'տանես իրանց թերթիկներով»։ Վարդ-Րէսլին յայտնեց իր շնորհակալութիւնն ու ձանապարհ ընկաւ դէպի տուն։ Ձանապարհն անցնում էր մի աղքատ տնակի մօտով. այդտեղ բնակուում էր «հոգսամայրը», այն տխուր դէմքով խաղաղ կինը. Վարդ-Րէսլին միշտ այդպէս էր լսել նրան

կանչելիս ու չէր էլ կասկածում, որ նա մի ուրիշ անուն ունի:

«Հոգսամայր», — կանչեց Րէսլին, երբ տեսաւ պառտիքն պատուհանում — տեսէք, տեսէք, այսպիսի վարդեր իսկի տեսել էք»:

«Ո՛չ, Րէսլի, վաղուց արդէն չեմ տեսել», պատասխանեց կինը. իսկ երեխան շարունակեց իր ճանապարհը՝ բոլորովին զբաղուած իր ծաղիկների հոտով ու փայլով: Երբ Րէսլին հէնց ուզում էր ծռուել ճանապարհի վերջին տան մօտ, դուրս եկաւ այդ տան մէջ ապրող կինը, որին անուանում էին «խաչածեւ ճանապարհի վրայի գեղջիւհի», որովհետեւ այդ տունը խաչածեւ ճանապարհի վրայ էր գտնուում. նա իր երկու հաստ ձեռները կողքերին դարսելով սկսեց գիտել երեխային:

«Ահա այսօր կատարեալ Վարդ-Րէսլի ես գտի», կանչեց այդ կինը նրա ետեւից, «արի՛ այստեղ եւ մօտիկից ցոյց տուր գանձը»:

Վարդ-Րէսլին շտապով շուռ եկաւ եւ ուրախ-ուրախ իր փունջը մօտեցրեց այդ կնոջը. բայց այդ արագ շարժման ժամանակ երեք-չորս վարդի թերթիկները թափուեցին ու տարածուեցին գետնի վրայ: Րէսլին տխուր նայեց գրանց: «Ափս՛ս», ասաց կինը, «գրանք ինձ

պէտք կ'գան, զաւակս, տո՛ւր ինձ վարդերդ, դրա փոխարէն քեզ մի մեծ կտոր հաց կ'տամ: Շատ հեռու չես կարող տանել, մինչեւ որ տուն հասնես, միայն կոթերը կ'մ'նան ձեռիդ: Ե՛կ, տո՛ւր ինձ»:

«Իմ բոլոր վարդերը քեզ տամ ու ոչ մէկն ինձ համար չ'պահեմ», ասաց Րէսլին նեղացած:

«Մէկը կարող ես պահել քեզ համար. տես, այս. իսկ միւսները շուտով կ'թափուին: Եկ, այստեղ գիր, դրանք իզուր չ'պէտք է կորչեն», ասաց գեղջիւհին ու բաց արեց իր գոգնոցը: Րէսլին վարդերից մէկն ամրացրեց իր կրծքին, ուր համարեալ միշտ մի վարդիկ էր լինում նստած, իսկ մնացածն այնտեղ ամեց: Գեղջիւհին ներս գնաց ու շուտով դուրս եկաւ մի մեծ կտոր հաց ձեռին բռնած. երեխան երբ տեսաւ հացը, իսկոյն զգաց որ լաւ քաղցած է: «Լսի՛ր, Րէսլի, մի լաւ խորհուրդ տամ», ասաց գեղջիւհին հացի կտորը երեխային տալով. «վերջու՛մ մի կողովիկ եւ ամեն երեկոյ գնա՛ վարդ եղած տեղերն ու խնդրի՛ր, որ քեզ տան թառամող վարդերը. յետոյ նրանց իսկոյն կողովիկի մէջ գիր, որ թերթիկները չ'կորչեն, որովհետեւ հէնց դրանք են հարկաւոր ինձ, եւ իւրաքանչիւր երեկոյ, երբ ինձ համար բա-

աւականին վարդի թերթիկներ կ'ըբերես, մի մեծ
պտոր հաց կ'ստանաս. ուզում ես:

«Այո՛, սիրով», ասաց Վարդ-Րէսլին ու ճանա-
պարհ ընկաւ գէպի տուն՝ մեծ ախորժակով
ուտելով իր հացը: Երբ երեխան նորից անց-
նում էր «հոգսամօր» տնակի մօտով, նա փայ-
տի կապոցը շալակած տուն էր գալիս:

«Ո՛ր են քո գեղեցիկ վարդերը», հար-
ցրեց նա, երբ երեխան կանգնեց նրա առաջ:
Քէսլին պատմեց նրան այն բոլորը, ինչպէս որ
եղել էր. ասաց նոյնպէս, որ ինքն ամեն օր
«խաչաձեւ ճանապարհի վրայի գեղջիուհու»
համար վարդի թերթեր պէտք է բերէ:

Այդ կինը միտք անելով լսեց երեխային ու
ասաց համարեա՛ թէ վախենալով. «Րէսլի, չե՛ս
կարող վաղը, գեղջիուհուն վարդեր տանելուց
առաջ, ինձ մօտ գալ, քեզ պէտք է մի բան
հարցնեմ:

«Այո՛, կ'գամ, հոգսամայր, բարի գիշեր»,
ասաց Րէսլին ու գնաց իր ճանապարհով: Հաս-
նելով իր մօրեղբօր հեռաւոր տնակը, նա ներս
մտաւ առանձնացած, լուռ սենեակը: Նա ո՛չ
գուռը փակեց, ոչ էլ ճրագ վառեց: Թռչնակի
նման իրիգնալուսով փնտռեց իր բունն ու շու-
տով քնեց հանգիստ: Նա երազում էր իր վար-

դերի մասին, մինչեւ որ պայծառ արեգակը նո-
րից զարթեցրեց նրան:

ԳԼՈՒԽ II.

Փոքրիկ օգնող և մեծ օգնութիւն:

Այն կինը, որին մարդիկ «հոգսամայր»
անունն էին տուել, մի շատ աղքատ այրի կին
էր: Նա մի անգամ լաւ օրեր էր տեսել ու
սովոր չէր ողորմութիւն խնդրելու. նա իր
պակասութիւնն ու կարիքը համբերութիւնով
տանում էր ու ոչ ոքի չէր ասում, միայն Աս-
տըծուն էր գանգատում ու նրանից միայն
սպասում իր մխիթարութիւնը: Նրա գերձակ
մարդը վաղուց արդէն մեռել էր ու նրան
միայն մի տղայ թողել: Սա էլ իր հօր նման
գերձակ պէտք է դառնար. այդպէս էր որո-
շել երեխայի խնամակալը, բայց Յովսէփը—
երեխան—չէր ուզում: Նրբ նրան գերձակի մօտ
էին ուղարկում աշխատելու՝ փախչում էր ու
տուն էր գալիս կէս գիշերին, կամ թէ բո-
լորովին չէր գալիս: Այդպէսով նա վատ ըն-
կերների մէջ ընկաւ ու նրա խնամակալ տա-
նուտէրը սպառնում էր, որ եթէ չ'ուղղուի եւ

չաշխատէ, նրան Աւստրալիա կ'ուղարկէ: Այս բանի վրայ Յովսէփը շատ բարկացաւ ու ասաց, որ կարող է աշխատել, եթէ թողնեն որ իր ուղածն անէ. իսկ օտար երկիր ինքն էլ կարող է գնալ՝ առանց ուղարկելու: Յետոյ նա անյայտացաւ ու էլ յետ չ'եկաւ: Մայրը շատ ողբաց, բայց վերջ՝ իր որդուն յանձնեց Աստրալիա կամքին. իսկ երբ գիւղացիները ծաղրելով ասում էին նրան. «Ինչ օգուտ տուեց քեզ այնքան աղօթելը, Տիմա հոգսի ու թշուառութեան մէջ ընկար եւ Յովսէփն էլ դուրսը, օտարութեան մէջ պէտք է կորչի» — նա պատասխանում էր. «Եթէ մինչեւ մահս էլ հոգսամայր մնամ ու թշուառութեան մէջ մեռնեմ, էլի չեմ կորցնի Յովսէփի վրայ ունեցած վստահութիւնս. նա դեռ եւս կ'ուղարկի, որովհետեւ ես նրան միշտ Աստրալիա կամքին եմ թողել. իմ այնքան աղօթելն իրողը չի անցնի»:

Հետեւեալ օրը Վարդ-Ռէսլին ուսումնաբանից գալուց յետոյ նորից դուրս եկաւ տանից: Նա կողովիկ չ'ունէր, բայց միաբը դրեց վարդերն իր գոգնոցը լցնել: Աւրախ թռչնատալով նա հասաւ մեծ այգին, ուր նախագահի կինը զբօսնում էր ծաղիկների ածուների մէջ:

«Էլի վարդ ես ուզում, Ռէսլի», ասաց նա երեխային. «ներս արի, մէկը կամ երկուսն էլի կ'լինի»:

«Միայն նրանցից, որոնք արդէն թափուում են», ասաց Ռէսլին ու բաց արեց իր գոգնոցն, որ այսօր մէկ թերթիկ էլ գետին չ'ընկնի:

«Եթէ այդպէս է, ամբողջ գոգնոցդ կ'ըլցնեմ, այս կողմն անցիր»: Նախագահի կինն երեխային տարաւ վարդերով լիքը մի մեծ ածուի մօտ, որի բոլոր վարդերը վալուց արդէն բացուել էին կամ թէ կ'իսով չափ թափուած թերթիկներ ունէին: Այդ վարդերից տիկինն այնքան կտրեց, որ Վարդ-Ռէսլի ամբողջ գոգնոցը լցուեց:

«Վաղն էլ կարճ էմ գալ», հարցրեց Ռէսլին անհամբեր:

«Այո՛, կարող ես գալ», պատասխանեց տիկինը. «այն վարդերն, որոնց ժամանակն անց է կացել, կարող ես բոլորը ստանալ, եթէ ուզում ես»:

Վարդ-Ռէսլին շնորհակալութիւն արեց եւ ուրախ դուրս վազեց: Հասնելով հոգսամօր քանդուած տան մօտ, նա յիշեց որ խոստացել էր նրա մօտ գնալ: Նա մտաւ ցածլիկ սենեակն, ուր հոգսամայրը ջահրի մօտ նստած

Թել էր մանուկն Նա մեծ ուրախութիւնով բարեւեց Ռէսլին, գնաց պատուհանի մօտ եղած վարդի թփից երկու կարմիր վարդիկ կտրեց ու սուեց երեխային:

«Տես, Ռէսլի, սասց նա քաշուելով, ուզում էի հարցնել քեզ՝ թէ այս երկու վարդիկն էլ չես վերցնի հետդ. կարելի է գեղջկուհին դրա համար էլ մի կտոր հաց տայ, թէկուզ մի փոքրիկ կտոր լինի: Կանես այդ, Ռէսլի»:

«Այո՛, այո՛», արագ պատասխանեց երեխան. «յետոյ հացը կ'ըբերեմ ու կ'տամ ձեզ: Եւ շուտով կրկին այստեղ կ'լինեմ»:

Խաչածեւ ճանապարհի վրայի գեղջկուհին կանգնած էր տան առաջ բանջարեղէնի պարտիզի պարսպի մօտ եւ մէկ-մէկ նայում էր պարսպի վրայ դրուած կողովիկներին. դրանց մէջ փռուած էին անուշահոտ վարդի թերթիկներն՝ արեւի տակ չորանալու համար: Գեղջկուհին ամեն տարի անուշահոտ վարդաջուր էր պատրաստում, այդ պատճառով եւ նրան շատ վարդ էր հարկաւոր. բայց վարդ ճարելն էլ այնքան հեշտ չէր:

«Նստ լաւ», սասց նա ուրախ, երբ Վարդ-Ռէսլին եկաւ ու իր գոգնոցը բաց արեց, «այսօր դու մի մեծ կտոր հաց կ'ստանաս»:

«Այ, երկուսն էլ ունիմ», սասց Ռէսլին եւ ցոյց տուեց հոգսամօր տուած վարդիկները:

«Այդ էլ միւսների մօտ գցիր. թէեւ դրանք շատ լղար են, բայց էլի մի քանի թերթիկներ հօ ունին»:

«Բայց ես ուզում եմ, որ սրա համար մի առանձին կտոր հաց տաս», սասց Ռէսլին ու վարդերը բաց չէր թողնում ձեռից:

«Գիտեմ», սասց գեղջկուհին ներս մտնելով, «մենք էլ մի անգամ այդպէս էինք. երեխաներն ուսումնարանում մի կտոր հացը փոխում են տանձի կամ մի քանի շորի հետ. այդպէս չէ, Ռէսլի: Ս.հա վերցրու. այս մեծ կտորը գոգնոցի վարդերի համար է, իսկ այս փոքրը այն երկուսի համար, որ փոխես. գո՛հ ես»:

«Այո՛, այո՛, իհարկէ», հաստատեց Ռէսլին. շատ շնորհակալ եղաւ ու յետ դարձաւ: Փոքրիկ կտոր հացը նա դրեց գոգնոցի մէջ հոգսամօր համար, իսկ մեծ կտորն սկսեց ախորժակով կծօսել, որովհետեւ ճաշին շատ քիչ բան էր կերել, իսկ երեկոյեան ուտելու ոչինչ չ'ունէր:

Ռէսլին մինչեւ հասաւ հին խրճիթը, իր հացը վերջացրեց. ներս մտնելով պառաւի մօտ նա ասաց.

«Ահա, հոգսամայր, հացը բերի»:

Պառաւր շնորհակալութիւնով սեղմեց երե-
խայի ձեռը. «դու չ'գիտես թէ ի՞նչ բարու-
թիւն ես անում ինձ, Րէսլի», ասաց նա: «Տես,
այդ փոքրիկ պարտէզում գեանախնձոր ունիմ
ցանած, այդ է իմ միակ կերակուրը. բայց
այդ էլ շատ անգամ չեմ կարողանում մարսել:
Հացը շատ թանկ է ինձ համար եւ երբ հա-
մարեա՞ թէ ոչինչ չեմ ուտում, այնքան թու-
լանում եմ, որ էլ չեմ կարողանում թել մա-
նել. այդ պատճառով շատ գոհ եմ քո բերած
հացով, Րէսլի, եւ սրտանց շնորհակալ եմ քեզ-
նից»:

Վարդ-Րէսլին այժմ փոշմանեց, որ հոգ-
սամօր համար միայն փոքրիկ կտոր հացը բե-
րեց, իսկ ինքը մեծ կտորը կերաւ. նա անգա-
դար ասում էր իր մտքումը. երանի թէ մի-
այն փոքրիկ կտորն ուտէի եւ ոչ թէ մեծը ու
շատ տիրեց: Հոգսամայրը կարծեց թէ նա էլի
քաղցած է ու անպատճառ ուզում էր այդ
փոքրիկ կտոր հացը նորից յետ տալ. բայց Րէս-
լին աղաղակեց. «Ո՛չ, ո՛չ, չ'եմ ուզում. ես
արդէն բաւական կերայ, վաղն էլի կ'գամ»,
ասաց ու դուրս փախաւ:

Հետեւեալ օրը նա ճիշտ նոյն ժամանա-

Հետեւեալ օրը նա ճիշտ նոյն ժամանա-
կին եկաւ: Նախագահի կինը մի անգամ էլ լցրել
էր նրա գոգնոցը վարդերով ու մի անգամ էլ
կարողացել էր հոգսամայրը երկու վարդիկ կրտ-
րել իր թփից ու Րէսլին տալ: Երբ Րէսլին իր
բեռով խաչածեւ ճանապարհի վրայի գեղջկու-
հու մօտ հասաւ ու գոգնոցի վարդերը նրան
տուեց, ասաց.

— Կարելի՞ է, որ այսօր միայն մի կտոր հաց
տաք, բայց երկուսի չափ մեծ: «Տեսնո՞ւմ ես,
ես արդէն գիտէի», պատասխանեց գեղջկուհին,
«հիմա տեսար որ ախո՞ս է հացը փոխել տան-
ձի ու խնձորի հետ: Սյդպէս լաւ է. պահիր,
այսօրուայ հացը բոլորովին թարմ է. մի լաւ
կտոր կ'ստանաս. հետս եկ»:

Գեղջկուհին մտաւ խոհանոցն ու ամբողջ
մեծ հացից մի այնպիսի ահագին կտոր կրտ-
րեց, որի նմանը Րէսլին իր կեանքումը ձեռքին
չէր ունեցել: Նա ուրախացած շուտ վաղեց հոգ-
սամօր մօտ ու ամբողջ կտորը նրան տուեց.
Իսկ ինքը մի թիքա էլ չկարողացաւ ուտել այդ
հացից: Կարծես մի ծանր բեռը ճնշում էր
նրա սիրտը, որ երեկ մեծ կտորն ինքն էր կե-
րել ու փոքր կտորը հոգսամօր համար բերել:
Իսկ աժմ նա փայլում էր ուրախութիւնից:

10001 (609) 2163-60



զարմացած պառաւը հացը նորից դէպի երե-
խան մեկնեց ու ասաց.

«Այս ի՞նչ է, Բէսլի, երեւի քո հացն է՝
վերցրու՛ւ, եթէ դրանից միայն մի փոքր կտոր
կտրես ու տաս ինձ՝ շնորհակալ կ'լինեմ»:

«Ո՛չ, ո՛չ, մի փշրանք էլ չեմ վերցնի»
աղաղակեց երեխան. «բարի գիշեր, վաղն էլի
կ'գամ»:

«Ես էլ վարդ չունիմ, Բէսլի, բայց շնոր-
հակալ եմ. դու չ'գիտես թէ ի՞նչ բարութիւն
արի՞ր ինձ»:

Այս ասելու ժամանակ պառաւ կնոջ աչե-
քը արտասուքով լցուեցին: Բէսլին տեսաւ այդ-
ու մի վայրկեան մտախոհ էր, բայց շուտով մի
բան միտն եկաւ ու նորից ուրախ էր սրտանց,
երգում ու թռչկոտում էր ուրախութիւնից
եւ մտածում՝ թէ վաղն ի՞նչ պէտք է անէ:

Շուտով նախագահի կնոջ վարդերն էլ
հատան. բայց Բէսլին իր դէս ու դէն ման-
գալուց այնքան այգիների տեղեր գիտէր, որ
վարդ գտնելու համար չէր հոգում. նա
այնպէս արագ ու թեթեւաշարժ էր, որ եր-
կար ու հեռու ճանապարհն էլ նրան կարճ էր
թւում: Այսպիսով նա ամեն երեկոյ մի գոգ-
նոց լիքը վարդ էր բերում գեղջկուհու համար.

եւ ամեն անգամ էլ նրանից մի կտոր հաց
ստանում: Եւ որովհետեւ գեղջկուհին շատ գոհ
էր Բէսլիից, հետզհետէ աւելի մեծ կտորներ
էր տալիս: Նրա դրացուհին, որ նոյնպէս վար-
դաջուր էր պատրաստում, նախանձում էր՝
տեսնելով Բէսլիին իր լիքը գոգնոցը դատար-
կելիս ու ասում. «զարմանալու բան չէ, որ խա-
ջածեւ ճանապարհի վրայի գեղջկուհին ինձնից
լաւ վարդաջուր է պատրաստում, եթէ ես էլ
այդպիսի սիրուն վարդի թերթեր ունենայի,
կարող էի նրա պէս լաւը պատրաստել»: Բէս-
լին իր ստացած հացն երբէք էլ ինքը չէր ու-
տում եւ բոլորը տանում էր հոգսամօր հա-
մար, թէեւ խեղճ կինը միշտ ուզում էր, որ
անպատճառ կէսը նա վերցնի: Մի մի անգամ
էլ Բէսլին հարցնում էր. «հոգսամայր, հացը
վրայ է գալիս ձեզ». այդ ժամանակ պառաւը
նորից պատմում էր՝ թէ որքան աւելի ուժեղ
է զգում իրեն այն ժամանակից սկսած, երբ
ամեն օր հաց է ուտում, թէ այդպիսով ինքն
աւելի շատ թել կարող է մանել ու դրանով
փող աշխատել, այնպէս որ այս ձմեռ այնպէս
չի մրսի, ինչպէս ուրիշ անգամները:

Պատմելուց յետոյ նա միշտ ասում էր. «Ե-
րանի թէ կարողանայի քո արած բարութեան

փոխարէնը վճարել, Բէսլի»։ Բայց այդ ժամանակ Բէսլիի դէմքն ուրախութիւնից այնպէս փայլում էր, որ կարելի էր նկատել՝ թէ նա արդէն ամենալաւ հատուցումն էր ստացել։

Այսպէս շարունակուեց մինչեւ որ վարդի ժամանակն անց կացաւ։ Մի երեկոյ, երբ Բէսլին շատ հեռու էր վազել, իզուր տեղը շատ այգիներ տնտղել ու վերջը միայն երեք կիսաթառամ վարդիկ ձեռին՝ գեղջկուհու մօտ եկել, վերջինս ասաց.

«Վարդերի բանը պրծաւ այժմ, բայց միւս տարի քո սիրուն փնջերն էլի ինձ մօտ կ'բերես»։ Այս խօսքերն այնպիսի տպաւորութիւն արին Բէսլիի վրայ, որ գեղջկուհին չէր սպասում։ Նա կարծում էր թէ այսպիսի երեխան ամեն տեղ բարի մարդկանցից մի մի բան կ'ստանայ ու իր տուած մի կտոր հացն այնքան նշանակութիւն չի ունենայ նրա համար։ Իսկ Բէսլին մտածում էր հոգսամօր մասին. ինչ կ'լինի նրա վրձակն, եթէ նա բացի մի քիչ գետնախնձորից ուտելու ուրիշ ոչինչ չ'ունենայ։ Երբ այժմ ճիշտ իմացաւ, որ էլ վարդ չի լինիլ, նրա աչերն արտասուքով լցուեցին։

«Ո՛չ, ո՛չ, մի՛շտ լինիր, Բէսլի», ասաց գեղջկուհին ցաւակցելով. «խօստացիր, որ դու յա-

ջորդ ամառն էլ այնքան սիրուն վարդեր կը բերես, ինչպէս այս տարի, այն ժամանակ ամբողջ ձմեռը դու ամեն օր կ'ստանաս քո մի կտոր հացը։ Ուզո՞ւմ ես»։ Բէսլիի արտասուքը շուտով ցամաքեց. նա նորից փայլում էր ուրախութիւնից։

«Այո՛, ի հարկէ ուզում եմ. իմ բոլոր վարդերը ձեզ համար կ'բերեմ, նոյնպէս եւ «անմտուկ» ծաղիկներից»։

«Այդ հարկաւոր չէ, բայց վարդը չ'մոռանաս։ Ահա՛ քո մի կտոր հացը. հիմա խնձորի ժամանակն է գալիս, դրանից էլ կ'ստանաս ահա՛ Բէսլի»։ Եւ գեղջկուհին վերցրեց մի մեծ կարմրաթշիկ խնձոր ու մի կտոր հացի հետ տուեց երեխային։ Բէսլին վերցրեց եւ ուրախ սրտով դուրս վազեց այնտեղից. իսկ գեղջկուհին գոհ սրտով նայում էր նրա ետեւից, որովհետեւ նա սիրում էր Բէսլիին եւ ուրախանում՝ տեսնելով նրա բաւականութիւնը։ Միւս կողմից իր համար էլ լաւ էր, որ միւս տարի էլ շատ վարդ կ'ունենայ։ Նա արդէն նկատել էր, որ դրացուհին նախանձով էր նայում իր վարդի թերթերին, ու մի փոքր վախեցել, որ չ'լինի թէ նա միւս ամառուայ համար Բէսլիին իր կողմը գրաւէ, որովհետեւ

դրացուհին արդէն իմացած կ'լինէր, որ այդ սիրուն վարդեր բերողը Ռէսլին էր: Հոգսամայրը նոյնպէս գոհ էր այդ երեկոյ: Երբ Ռէսլին, որ միշտ արեւի լոյս էր ներս բերում պառաւի միայնակ սենեակը, պատմեց բոլորն, ինչ որ խօսել էր գեղջկուհու հետ, հոգսամայրը ձեռները կցեց ու լուռ շնորհակալ եղաւ Աստրժուց, որ ուղարկել էր այդ երեխային, ինչպէս մի բարի հրեշտակ. նրա շնորհիւ ինքն այժմ ահաւոր ձմրան աւելի քիչ վախով ու հոգսով կարող էր սպասել, քան ուրիշ անգամ:

ԳԼՈՒԽ III.

Վարդ-Ռէսլիի դարդը:

Մի քանի օրից յետոյ կարծես թէ մի զարմանալի փոփոխութիւն եղաւ, այնպէս որ հոգսամայրն ու Վարդ-Ռէսլին իրանց դերերը փոխեցին: Պառաւ կինը նստած էր խաղաղ, ուրախ դէմքով իր ջահրայի մօտ. այդ ժամանակ ներս մտաւ Ռէսլին. նա այնպէս տխուր էր երեւում, որ կարծես թէ նրա ուրախութիւնը բոլորովին ոչնչացնող մի բան էր պատահել նրան:

«Ի՞նչ է պատահել քեզ, ի՞նչ է պատահել քեզ», հարցրեց վախեցած հոգսամայրը:

«Շորս ծակուել է», ասաց նա բաւականին բարկացած, «ուսումնարանում երեխաները ծիծաղում էին ինձ վրայ. նրանք դասերի վերջը վազեցին իմ ետեւից ու ամենքը բարձրը ձայնով երգում էին.

«Վարդարէսլի, վարդաթուփ.

«Վարդարէսլի, ծակած շոր»:

Յիշելով իր կրած այս խայտառակութիւնը, Ռէսլիի այտերի վրայից արտասուքի մեծ մեծ կաթիլներ գլորուեցին:

«Այդ լաւ չէ, որ երեխաները ծիծաղում են քեզ վրայ, բայց գուցէ չար մտքով չէին անում. արի այստեղ, Ռէսլի, ցոյց տուր պատըռուածը, նորից կարգի կ'բերենք,» մխիթ սրում էր նրան հոգսամայրը:

Ռէսլին մօտեցաւ նրան. եւ պառաւն իսկոյն նկատեց ահագին պատուածը: Երեխան նրստեց նստարանի վրայ եւ բարի պառաւը թել ու ասեղ բերելով իսկոյն սկսեց իր գործը:

Բայց Ռէսլին չէր կարողանում մոռանալ իր դարդն ու բարձր ձայնով հեկեկում էր:

«Մխիթարուի՛ր այժմ, Ռէսլի», ասաց հոգսամայրը բարեկամաբար, «գու էլ այդ պիտի

վիշտ չես ունենայ: Ես ամեն երեկոյ լաւ կը տեսնեմ շորդ եւ ամեն մի փոքրիկ ծակ իսկոյն կ'կարեմ: Եթէ մի անգամ մի բանի գէժ ընկնես եւ շորդ պատռուի, շուտ ինձ մօտ արի, ես իսկոյն կ'կարեմ: Սյժժժ կարող ես նորից ուրախ լինել»:

«Սյո՛, այդպէս կարող եմ», ասաց Րէսլին թեթեւացած սրտով ու սրբեց արտասուքը. «ես կարծեցի թէ ամեն առաւօտ էլի շորս պատռուած կ'լինի եւ նրանք էլ ամեն օր ետեւիցս կ'վազեն ու կ'երգեն».

«վարդարէսի, վարդաթուփ» — այդ պատճառով էլ չէի ուզում ուսումնարան գնալ»

«Ձէ, չէ, Րէսլի, պէտք է գնաս. այդ օրէնք է եւ շատ լաւ օրէնք, եթէ այդպէս չ'լինէր դու ոչինչ չէիր սովորի: Գժբախտութեան պատահելիս իսկոյն չ'պէտք է փախչել, այլ լուռ ու մունջ համբերել, որովհետեւ Աստուած շատ անգամ դրանով մեզ մի բան է ուղղում սովորեցնել, որ մենք չ'էինք սովորի, եթէ այդպէս չ'լինէր: Երբ մենք տխուր ու տրտում ենք, այն ժամանակ խորհուրդ ու մխիթարութիւն ենք սպասում Աստրծուց եւ նրան ճանաչում: յետոյ մեր սիրտը լցւում է հաստատ յուսով»

տեսնելով որ ունինք մի երկնաւոր Հայր, որ մեզ օգնում է եւ լսում, երբ կանչում ենք նրան: Գու էլ աղօթում ես նրան, Րէսլի»:

Երեխան մի փոքր մտածելուց յետոյ ասաց. «Սյո՛, ուսումնարանում»:

«Ի՞նչ ես աղօթում ուսումնարանում»:

Րէսլին առանց շունչ քաշելու, մէկզմէկու ետեւից արագ-արագ ասաց մի աղօթքի սկիզբըն ու կանգնեց. «էլ չ'գիտեմ շարունակութիւնը», ասաց Րէսլին եւ մի խօսք էլ չ'կարողացաւ աւելացնել:

«Սյդ շատ սիրուն աղօթք էր, բայց մի փոքր արագ ասացիր. մտածել ես դրա բովանդակութեան մասին»:

«Ո՛չ, չեմ մտածել», պատասխանեց Րէսլին:

«Տեսնում ես. այդ նշանակում է թէ առաւօտը, երբ աղօթում ես, ամենից առաջ պէտք է Աստրծուն մտաբերես, ուրախանաս ու նրանից շնորհակալ լինես, որ ամբողջ գիշերը պահանք քեզ: Սյդպէս պէտք է աղօթել առաւօտը: Գիտես արդեօք մի երեկոյեան աղօթք»:

«Ո՛չ, ոչ մէկը չ'գիտեմ»:

«Սյն ժամանակ կարող ես քո սրտից բխած խօսքերով աղօթել Աստրծուն եւ նրանից ներողութիւն խնդրել, եթէ այդ օրը մի ան-

արդար բան ես արել. Նրանից պէտք է խընդորեա նոյնպէս, որ քեզ օգնէ՝ նորից այդպիսի բան չ'անելու: Տես, Րէսլի, եթէ մարդ կարողանում է այդպէս աղօթել Աստըծուն, նա շատ գոհ է լինում. եթէ ես միշտ այդպէս չ'անէի, վաղուց արդէն ցաւից ու վշտից մեռած կ'լինէի»:

«Ինչո՞ւ», հարցրեց Րէսլին մի փոքր զարմացած:

«Հն, տես, պատճառներ շատ ունիմ. ես շատ աղքատ եմ ու ապրելու միջոց չունիմ: Մի որդի էլ ունիմ օտար աշխարհում, մի սողայ ու ոչինչ տեղեկութիւն չունիմ նրանից. գուցէ նա թշուառութեան մէջ փչանում է, կամ գուցէ արդէն մեռել է: Եւ եթէ ես նրան նրա ծննդից յետոյ եւ այժմ էլ Աստըծուն պահ չ'տայի ու ամեն գիշեր չ'կարողանայի ասել. «Նա հօ Քոնն է, օգնիր նրան» — չէի կարող վախից ու հոգսից քնել. բայց երբ այդպէս աղօթում եմ՝ սիրտս վստահանում ու մխիթարում է»:

«Սյն ժամանակ ես էլ ձեզ հետ կ'աղօթեմ նրա համար», ասաց Րէսլին:

«Շատ ուրախ եմ, զաւակս, շատ ուրախ եմ. երբ Յուլսէփի համար աղօթես, քեզ համար էլ զաւ կ'լինի. ես գիտեմ այդ»:

«Ինչո՞ւ», հարցրեց կրկին Րէսլին:

«Տես, զաւակս, — սկսեց հոգսամայրը սիրալի կերպով, բայց մի փոքր վախենալով — քեզ մօրեղբայրը շատ վատ է տարել իր գործը. ասում են որ շուտով նրա տունն ու արտը կը խլեն. այն ժամանակ դու օտար մարդկանց ձեռը կ'ընկնես, որտեղ շատ աշխատանք կ'ունենաս, բայց լաւ խօսք քիչ կ'լսես: Ինչու դեռ այդ չ'գիտես, այդ պատճառով լաւ է, որ գիտենաս Աստըծուն ճանաչելու ճանապարհը, ամեն բան նրան յայտնես ու մխիթարութիւն գտնես»:

«Սյն ժամանակ ձեզ մօտ կ'գամ ու ձեզ հետ կ'ապրեմ», ասաց Րէսլին աւելի ուրախացած:

«Ախ, բարի զաւակս, ես չեմ կարող քեզ վերակրել. աւելի լաւ է որ Աստըծուն ապաւինենք. նա կ'հոգայ քեզ համար: Ահն, բոլոր պատուաւորները կարեցի», վերջացրեց իր խօսքը հոգսամայրը, որ այդ խօսակցութեան ժամանակ լաւ տնտղել էր երեխայի զգեստն ու կարկատել: «Եթէ էլի պատուուի, արի՛ ինձ մօտ, ես նորից կ'կարեմ»:

Րէսլին շնորհակալութիւն արեց, թեթեւացած սրտով դուրս գնաց այնտեղից եւ թըռչ-

կոտարով գնաց տուն: Այժմ ուսումնարանում երբէք էլ չէին կարող ծաղրել նրան. այս միտքն այնքան ուրախացրեց Ռէսլին, որ նա բոլորովին մոռացաւ հոգսամօր սրած խօսքերը՝ թէ գուցէ շուտ ինքը օտար մարդկանց ձեռք կը ընկնի ու շատ գործ կ'ունենայ անելու:

Ռէսլին իր խոստացածը չ'մոռացաւ եւ քրնելու ժամանակ բարձր ձայնով ու սրտանց աղօթեց. «Սիրելի Աստուած, Յովսէփին էլ օգնիր»:

Այնուհետեւ եկաւ երկար ու խիստ ձմեռը: Հոգսամայրը թէեւ շատ մրսում էր, բայց երբէք քաղցած չէր մնում, ինչպէս առաջին տարիներն ու այդպիսով պահպանեց իր թոյլ առողջութիւնը: Վարդ-Ռէսլին նրա նեցուկն ու կերակրողն էր. նա աշնան վերջերը տեսել էր՝ թէ ինչպէս հոգսամայրը մեծ դժուարութիւնով մի փոքրիկ կապոց փայտ էր տուն թրեւել. այդ ժամանակից յետոյ Վարդ-Ռէսլին ամեն օր գնում էր անտառն ու այնքան փայտ հաւաքում, որ հոգսամայրը կարողանում էր ամէն օր իր սենեակում կրակ վառել ու փոքրիկ վառարանում իր հացապուրնեփել: Ռէսլին չ'նայելով ցրտին, ձիւնին ու փոթորկին, ամեն երեկոյ ուսումնարանից վերա-

դառնալուց յետոյ, երեւում էր խաչաձեւ ճանապարհի վրայի գեղջկուհու մօտ, շատ անգամ ցրտից կապտած ու դողալով, որովհետեւ թէեւ նա ձմեռուայ համար մի ուրիշ զգեստ էր ստացել, բայց այդ լաւ չէր տաքացնում նրան. իսկ վզին ու ուսերին միայն մի բարակ շոր ունէր փաթաթած: Եւ երբ գեղջկուհին տեսնում էր նրան այնպէս ցրտից դողալիս ու ատամները միմեանց խփելիս, մտածում էր ինքն իրեն՝ երեւի Ռէսլին շատ քաղցած է լինում, որ մի կտոր հացի համար այդ անպիտան եղանակին ու փոթորկին վազելով գալիս է իր մօտ: Այդ միտքը ցաւակցութիւն էր շարժում նրա սրտում եւ նա հաց կտրելիս դանակն աւելի խորն էր տանում, այնպէս որ կտրած կտորն աւելի մեծ էր լինում: Բայց երեխան բոլորը տանում էր հոգսամօր համար եւ միշտ մերժում էր նրա խնդիրը, որ գոնէ կէսն ինքը վերցնի: Եթէ Ռէսլին մի մի անգամ էլ քաղցած էր պառկում քնելու, ուրախանում էր, որ հոգսամայրը կարիք չունի. նա աղօթում էր. «Սիրելի Աստուած, օգնիր եւ Յովսէփին», եւ քնում հանգիստ:

Նրա զգեստն էլ ամբողջ ձմեռը հոգսամօր հսկողութիւնով առանց վնասի մնաց եւ

ոչ մէկ աշակերտ կամ աշակերտուհի էլ չէր
ծաղրում նրան ու ծիծաղում նրա ետեւից։

ԳԼՈՒԽ ԻՎ.

Նա էլ հոգսամայր չէ։

Ամառը նորից եկաւ ու բոլոր պարտէզնե-
րում ծաղկում եւ բուրում էին վարդերը։
Բոլոր ածուները լի էին վարդերով. վարդի-
տունկերը բեռնաւորուած էին ծաղիկներով եւ
բոլոր պատուհաններից գլուխները կռացրել
էին ծաղկամանների միջից։ Կատարեալ վար-
դի տարի էր։ Ամարային երեկոյեան արեւը փայ-
լում էր Վիլդբախի ու նրան շրջապատող մար-
գագետինների եւ անտառների վրայ։

Դիտրիխի տունը ծածկուեց այդ երեկոյեանե-
արեւի ոսկեգոյն ճառագայթներով ու փալիւ-
լում էր։ Տան առաջը կանգնած էին երկու
մարդ մտախոհ դէմքով։ Դրանցից մէկը Բէսլի-
մօրեղբայր Դիտրիխն էր. նա գիտէր, որ վա-
ղը ձեռից պէտք է խլեն իր տունը, արտն ու
այծը, բայց էլի պարտքից չ'պէտք է ազատուի։

Դիտրիխն իր երկու ձեռն էլ գրպանը դրեց
ու ասաց բարկացած. «ես կ'երթամ այստեղից.
էլ ոչինչ չեմ ուզում լսել այդ բոլորի մասին»։

«Միայն չ'պէտք է մոռանաս, որ քեզ կը
գտնեն», պատասխանեց միւտը. «երեխային կը
վերցնեմ, թէեւ նա չէ կարող աշխատել,
որովհետեւ դու նրան պարապ ման գալ ես-
տովորեցրել, բայց ես կ'ստովորեցնեմ նրան բրիջ
գործածելը։ Ուսումնարանից գալուց յետոյ բա-
ւականին ազատ ժամանակ կ'ունենայ եւ կ'օգնե-
ինձ»։

«Նա դեռ փոքր է», ասաց մօրեղբայրը։

«Աւելի շուտ կ'ստովորի», պատասխանեց միւտն-
ու գնաց իր ճանապարհով։

Սա Վիլդբախի ճանապարհներ մաքրողն էր.
նրա պաշտօնն էր բոլոր ճանապարհների վրայ
բուսած անպէտք խոտը գջլել ու դէն ածել։
Բոլոր երեխաները վախենում էին ու փախ-
չում նրանից, որովհետեւ նա չար ու կոպիտ
մարդ էր ու երբէք մի քաղցր խօսք չէր ասում։

Ահա այս մարդու մօտ պէտք է գնար
վաղն առաւօտը Վարդ-Բէսլին։ Նա երեխայ
չ'ունէր, այդ պատճառով նրան շատ ձեռնտու
էր այդպիսի մի երեխայ վերցնել, որ կարող
լինէր ամեն տեսակ թեթեւ ծառայութիւն-
ներ անել նրան։

Իսկ Բէսլին չէր էլ իմանում թէ այդ մար-
դիկ ինչ են վճռել։ Նա հէնց այժմ դուրս էր

Եկել Վիլգբախից ու մարգագետնի վրայով ու-
րախ-ուրախ դիմում էր գէպի ջրաղացը: Այն-
տեղ շատ սիրուն վարդերով լի մի պարտէզ
կար, իսկ ջրաղացպանի կիներ խոստացել էր
նրան մի մեծ փունջ տայ: Եւ երբ երեկոյեան
արեւը փայլում էր ոսկի գոյնով, Բէսլին ար-
գէն վարդերը ձեռին կրկին ուրախ վերադառ-
նում էր այդ ճանապարհով: Նա դեռ շատ
չէր գնացել, երբ մի երիտասարդ մարդ շտապ
քայլերով հասաւ նրա ետեւից, իր յարդեայ
գլխարկը ձեռին բռնած, որ երեկոյեան թարմ
օդով զովացնի գլուխը:

«Ի՞նչ սիրուն վարդեր ունիս», ասաց նա
հասնելով Բէսլին, «արգեօք մէկը կ'տո՞ս գըլ-
խարկիս վրայ շինեմ»:

Բէսլին համաձայնութեան նշան արեց ու
մէկ վարդ հանեց իր փնջից:

«Ա՛յ, շատ ապրիս, ամենից լաւն ես ինձ
տալիս», ասաց օտարականը՝ վարդն իր գլխար-
կի վրայ ամրացնելով: «Հեռո՞ւ պէտք է գնաս»:

«Ես գնում եմ տուն, Վիլգբախ», պատաս-
խանեց աղջիկը:

«Հո՛ւ, ուրեմն երկուսս էլ միեւնոյն ճանա-
պարհն ունինք», ասաց ճանապարհորդը Բէս-
լիի կողքին գնալով: «Եթէ դու Վիլգբախից

ես, կ'ճանաչես այնտեղի մարդկանց. կարո՞ղ
ես ասել, թէ ապրո՞ւմ է դեռ Նտայնման ա-
նունով բարի կիներ ու առողջ է»:

«Իրան չեմ ճանաչում», ասաց Բէսլին, «ոչ
ոք այդպիսի անուն չունի այնտեղ»:

«Ա՛խ Աստուած, ա՛խ Աստուած» հառա-
չեց օտարականն ու լռեց:

Բէսլին զարմացած նայում էր նրան, որով-
հետեւ նա մի մի անգամ սրբում էր իր ար-
տասուքն ու առաջուայ նման ուրախ չէր:

Բաւականին ժամանակ միմեանց հետ ա-
ռանց խօսելու գնալուց յետոյ, օտարականը
նորից սկսեց. «գիտե՞ս դէպի «խաչածեւ ճանա-
պարհի վրայի կնոջ» տուն տանող ճանապարհը»:

Բէսլին հաստատ գլխով արեց ու ասաց.
«ես ամեն օր այնտեղ եմ լինում»:

«Ուրեմն ասա՛ ինձ, ո՞վ է բնակուում այժմ
այն հին ողորմելի տնակում, ճանապարհի ձախ
կողմը, որտեղ մի ծուռ ուռենի կայ»:

«Այնտեղ բնակուում է հոգսամայրը, նրան
շատ լաւ եմ ճանաչում»:

«Այդ ի՞նչ անուն է, ուրիշ անուն չ'ունի՞ նա»:
«Չ'գիտեմ»:

«Նա այդպէս է կոչուում շատ հոգսեր ու-
նենալու պատճառով. գիտե՞ս այդ»:

«Այո՛, նա շատ հոգսեր ունի, որովհետեւ չ'գիտէ թէ արդեօք Յովսէփը թշուան է»:

«Ա՛խ Աստուած, ա՛խ Աստուած», աղաղակեց նորից օտարականն ու այնպիսի քայլեր արեց, որ Բէսլիից առաջ անցաւ. բայց նա էլի յետ եկաւ, բռնեց երեխայի ձեռից եւ բարեկամաբար ասաց. «Արի՛ միասին գնանք ու էլի քիչ խօսենք»: Այդ ասելու ժամանակ նա այնպէս բարի ու զուարթ էր երեւում, որ Բէսլին էլ մտերմացաւ:

«Առա՛ ինձ», սկսեց նա նորից, «հոգսամայրը չարացած է Յովսէփի վրայ»:

«Ո՛չ, նա ամեն գիշեր աղօթում է նրա համար. եթէ չ'աղօթէ, նա չի կարող քնել. ես էլ օգնում եմ նրան»:

«Հա՛, դու ի՛նչ ես աղօթում նրա համար»:

«Ես աղօթում եմ. սիրելի Աստուած, օգնիր Յովսէփին»:

«Գուցէ սիրելի Աստուածը լսեց քո աղօթքն ու օգնեց նրան»:

«Կարծո՞ւմ էք», հարցրեց Բէսլին ու մեծ հետաքրքրութիւնով նայեց օտարականին, որի գէմքը փայլեց ուրախութիւնից: Բայց նա էլ չ'պատասխանեց:

Նրանք հասան ծուռը ուռնումն, որ այն

հին տնակից մի քանի քայլ հեռու էր:

«Մնաս բարով», ասաց Բէսլին ձեռը մեկնելով դէպի օտարականը, որովհետեւ տեսնելով նրա լուծիւնը, նա մի փոքր խաբուած էր զգում իրան, «ես գնում եմ հոգսամօր մօտ»:

«Ես էլ եմ գալիս», պատասխանեց նա շուտ երկուսն էլ մօտ եկան խրճիթին, բայց դեռ գռանը չ'մօտեցած՝ ներսից դուրս թռաւ հոգսամայրը, գրկեց օտարականին ու աղաղակեց մի քանի անգամ. «Օ՛, Յովսէփ. այս դ՛ու ես, ճի՛շտ»: Ուրախութիւնից նա լաց էր լինում: Յովսէփին էլ լաց էր լինում նրա հետ: Այժմ՛, երբ Բէսլին հասկացաւ, որ օտարականը Յովսէփին է ու վերադարձել է հոգսամօր մօտ եւ այնպէս պատուած շորեր չ'ունի—ինչպէս ինքը կարծում էր—այլ օրինաւոր, ուրախութիւնից չ'գիտէր թէ ի՛նչ անէ. նա փաթաթուեց լաց լինող մօրն ու աղաղակեց ցնծալով. «Տէր Աստուած օգնեց նրան, Տէր Աստուած օգնեց նրան»:

Յետոյ երեքը միասին ներս մտան տուն. այժմ՝ միայն հոգսամայրը ոտից մինչեւ գլուխ գիտեց իր որդուն եւ նրա սիրտը լցուեց ուրախութեան եւ շնորհակալութեան զգացումով՝ որովհետեւ Յովսէփը չէր նմանում մի թը-

շուառ ու փչացած մարդու, ինչպէս որ ինքը շատ անգամ երեւակայել էր նրան: Մայրը որդուն նայելով չէր կշտանում, տեսնելով նրա գեղեցկութիւնը:

«Սրի, մայրիկ, արի», ասաց այժմ երիտասարդն ուրախ դէմքով, «հիմա նստենք, մի բան ուտենք եւ ուրախ լինենք. այս երեխան կարող է մի բան բերել մեզ համար»:

«Ա՛խ, այո՛, կարող է», ասաց մայրը: «Ի՛նչքան լաւութիւն է արել դա ինձ. այժմ էլ տըղիս բերեց. ո՞րտեղից բերիր նրան, Բէսլին»:

«Սյդ ես կ'պատմեմ, մայրիկ, դա թող գընայ մի մեծ հաց, մի շիշ գինի ու երշիկ բերի», խնդրեց Յովսէփն ու մի մեծ արծաթէ փող դրեց սեղանի վրայ:

«Մի ամբողջ հաց», հարցրեց Բէսլին մեծ զարմանքով. որովհետեւ նա համարեա թէ չէր ուզում հաւատալ, որ հոգսամայրը պէտք է յանկարծ ամբողջ հաց ունենայ: Նա ուրախ դուրս վազեց, անհաւատալի կերպով շուտ յետ եկաւ ու բերեց ինչ որ պատուիրել էին: Յետոյ երեքը միասին նստեցին փոքրիկ սեղանի շուրջն ու այնպիսի ճաշ կերան, որ երբէք չէր եղել այդ փոքրիկ սենեակում: Բայց մայրն ուրախութիւնից համարեա ոչինչ չ'կարողացաւ

ուտել եւ շուտ-շուտ կրկին հարցնում էր բարձրը ձայնով. «Միթէ՛ ճիշտ է այս, Յովսէփ» նա էլ ամեն անգամ ուրախ այո՛ էր ասում եւ միմեանց ետեւից հաց ու երշիկ էր տալիս Բէսլին. իսկ երբ երեխան ասում էր.

«Ո՛չ, ո՛չ, էլ չեմ ուտի. այդ հոգսամօր համար է». Յովսէփը պատասխանում էր.

«Կէր, մի վախենար, այսուհետեւ մայրիկն էլ ոչինչ պակասութիւն չի ունենայ, նա ամեն օր էլ բաւականին հաց կ'ունենայ»:

«Սյժմ», ասաց Յովսէփն իր երկար ծանապարհորդութիւնից յետոյ կազդուրուելով ու հանգստանալով, «այժմ պատմեմ քեզ, մայրիկս, թէ ի՛նչպէս եղաւ իմ բանը: Դու գիտես, որ ինձ ուզում էին Աւստրալիա ուղարկել, բայց ես չէի ուզում արտաքսուելով խայտառակուիլ եւ այստեղ էլ չէի կարող մնալ, այդ պատճառով էլ փախայ: Ես գնացի Անգլիա ու այնտեղ էլ մնացի, փող էլ չունէի, որ աւելի հեռու գնայի: Այնտեղ նեղութիւններ կրեցի, ծանր աշխատանք պէտք է յանձն առնէի, որ կարողանայի սպրել եւ կարծում էի թէ կըկորչեմ: Ես հաւատում եմ, մայրիկս, որ քո աղօթքը պահպանեց ինձ. ամեն անգամ, երբ աաստիկ նեղութեան մէջ էի ու վատ բաներ էին

մտքովս անցնում, յանկարծ կարծես լսում էի՝
 թէ ինչպէս քո ննջարանում կողքիս աղօթում
 ես ու Աստըծուն խնդրում, որ ինքդ ամեն տե-
 սակ նեղութիւններ կրես, միայն թէ իմ վեր-
 ջը բարի լինի: Քեզ աչքիս առաջ տեսնելով՝
 չէի կարող վատ բան անել—որ իմ պատճա-
 ռով գերեզման չ'մտնես ու սկսում էի նորից
 աշխատել: Ես աշխատում էի մեքենաների գոր-
 ծարանում ու հետզհետէ առաջ գնացի: Իննը
 տարում կարելի է մի բան սովորել, մայրիկս,
 եթէ մարդ ուզենայ. ես ուզում էի սովորել
 եւ այժմ լաւ մեքենայագործ եմ եւ կարող
 եմ գործ գտնել: Այսուհետեւ դու էլ, մայ-
 րիկս, այդպէս չես լինի. էլ ոչ ոք թող «հոգ-
 սամայր» չ'ստէ քեզ: Տես, իմ խնայած փողը
 քեզ համար եմ բերել. այժմ պատմիր թէ
 քո բանն ինչպէս եղաւ»: Այդ ասելով Յով-
 սէփը սեղանի վրայ, մօր առջեւ դրեց իր հա-
 լալ աշխատած գեղեցիկ արծաթէ մանեթները.
 սրտի ուրախութիւնը փայլում էր նրա աչքե-
 րում՝ տեսնելով իր մօր հետզհետէ աճող զար-
 մանքը:

«Ա՛խ, Յովսէփ, որքան ուրախ եմ, որ
 այս բոլորն ազնիւ ու հալալ աշխատանքով ես
 ձեռք բերել. չ'գիտեմ թէ ինչպէս շնորհա-

կալ լինեմ Աստըծուց. այս համարեա՛ն թէ շատ
 է»: Բարի մայրն անդադար ձեռները կցում
 էր, գոլում ու շնորհակալ լինում Աստըծուց.
 բայց Յովսէփը խնդրում էր. «ասա՛ն ինձ մայ-
 րիկ, թէ ինչպէս էիր ապրում»:

«Պատմելու շատ բան չ'կայ, Յովսէփ», ա-
 սաց նա. «ես շատ դժուար օրեր քաշեցի ու
 նեղութիւններ եւ իզուր չէ, որ մարդիկ ինձ
 հոգսամայր կանչեցին: Բայց մեր սիրելի Աս-
 տուածը միշտ օգնում էր ինձ: Միայն վեր-
 ցին տարին ես շատ թշուառ էի ու այնպէս
 թուլացել էի, որ կարծում էի թէ ձմեռը
 չեմ կարող անցկացնել: Այդ ժամանակ եկաւ
 երկնային հրեշտակի նման այս երեխան, Վարդ-
 Նէսիին ու նորից ոյժ տուեց ինձ: Նա ամբողջ
 ձմեռն ու մինչեւ հիմա պահեց ինձ եւ գիտեմ,
 որ նա շատ անգամ իր հացն ինձ էր տալիս
 ու ինքը քաղցած մնում: Այժմ ես միայն մի
 դարդ ունիմ, Յովսէփ. Նէսիին բնակւում է
 իր մօրեղբայր Դիտրիխի մօտ, որ վաղը պէտք
 է թողնի իր տունն ու տեղը եւ հեռանայ.
 երեխան պէտք է օտարի ձեռն ընկնի եւ ո՛վ
 գիտէ թէ ինչպէս կ'պահեն նրան»:

«Ի՛նչ. այս երեխան, որ քեզ պահպանեց,
 մայրիկ», նրա խօսքը կտրեց Յովսէփը. «մենք

այս երեխայի համար էլ մի բան կ'ունենանք
եւ ճրի կ'պահենք. գնում եմ Նիտրիխի մօտ.
Վարդ-Րէսլին էլ ոչ ոքի չենք տալ: Յովսէ-
փը դուռը բաց արեց ու դուրս գնաց:

Սյժմ Րէսլին վեր թռաւ իր աթոռի վը-
րայից, փաթաթուեց պառաւի վզովն ու աղա-
ղակում էր անդադար ուրախ-ուրախ.

«Հոգսամայր, հոգսամայր, հիմա կարող եմ
ձեզ մօտ ապրել, էլ չ'պէտք է գնամ»: Մայրն
էլ երեխային պինդ գրկեց ու ասաց. «Րէսլի,
որքան շնորհակալ պէտք է լինենք. եթէ մին-
չեւ մեր մահը միշտ շնորհակալ լինենք մեր
սիրելի Աստուծոց, էլի բաւական չի լինի: Եր-
բէք կեանքիդ մէջ չ'մոռանաս այդ. այժմ սըր-
տիս դարդն էլ կորաւ. սրանից յետոյ ինձ էլ
հոգսամայր մի կանչիր. ես էլ հոգսամայր չեմ,
բայց մայր կ'լինեմ քեզ համար»:

Երբ Րէսլիի մօրեղբայր Նիտրիխը Յովսէփից
խմացաւ՝ թէ ի՛նչ է ուզում, ուրախացաւ, որով-
հետեւ նա էլ ծածուկ կարեկցում էր Րէսլիին:
Նա չէր ուզում երեխային ճանապարհ մաք-
րողին տալ, բայց ուրիշ ճար չէր կարող անել
այդպէս շուտ, որովհետեւ միւս օրը վաղ-վաղ
նա ուզում էր գիւղից հեռանալ: Նա Յովսէ-
փին ասաց. «Տէնց այժմից երեխային մօտդ

պահիր ու տուն մի ուղարկիր քնելու. նրա ան-
կողինն էլ հետդ վերցրո՛ւ»: Նա մտածեց, որ
այդպէս աւելի ապահով կ'լինի. եթէ ճանա-
պարհ մաքրողը շատ էլ վաղ գայ, Րէսլին չի
կարող տանել: Յովսէփը շատ գոհ էր. նա
Նիտրիխի ձեռն էլ փող դրեց, որովհետեւ լսել
էր, որ մօրեղբայրը Րէսլիի հետ երբէք վատ
չէր վարուել: Յետոյ վերցրեց երեխայի աղբա-
տիկ անկողինը, դրեց ուսին եւ ուրախ տուն
եկաւ: Սյդ անկողինը դրեցին ննջարանում՝
պառաւի անկողնի կողքին եւ Րէսլին անասելի
ուրախութիւն էր զգում՝ տեսնելով որ այնու-
հետեւ կարող է գիշեր ցերեկ իր մօր մօտ մնալ:

Յովսէփն էլ իր ննջարանը գտաւ այնպէս,
ինչպէս որ թողել էր իննը տարի առաջ, որով-
հետեւ մայրն ամեն օր մտածում էր. «գու-
ցէ նա կրկին գայ, թող իր տեղը պատրաստ
լինի»: Եւ Յովսէփն էլ բաղդաւոր էր՝ իր ծը-
նընդեան տեղը գտնելով նորից. նա իր ցան-
կացած գործն էլ գտաւ, որովհետեւ ճարտար
ու փորձուած արհեստաւոր էր:

Ամեն առաւօտ, երբ Յովսէփը գործի էր
գնում, Րէսլին մի վարդ էր ամրացնում
նրա գլխարկի վրայ: Այս բանը շատ էր դուր
գալիս Յովսէփին եւ նա իր գործը ուրախ էր

կատարում: Նա միշտ վարդ էր ունենում իբր գլխարկի վրայ, եթէ մինչեւ անգամ շրջակայքում ոչ մի տեղ էլ վարդ չէր երեւում, որովհետեւ Րէսլին գիտէր այն տեղերն, ուր ծաղկում էր էլի մի վերջին վարդ եւ ստանում էր այդ վարդն, ումն էլ որ պատկանում լինէր: Այն օրից, երբ իմացուեց Րէսլիք պատմութիւնը, թէ ի՛նչպէս նա մենակ համարեա՞ մէկ ամբողջ տարի պահպանել էր հոգսամօրն, ամեն մարդ առաջուանից աւելի էր սիրում նրան. նա ուր որ գնում էր, ստանում էր իր վարդը, լինէր այդ թէ՛ առաջին եւ թէ՛ վերջին վարդը:

Այդպէս երջանիկ ապրում են Վիլզբախի ամենափոքրիկ տնակում այդ երեք բաղդաւոր մարդիկը եւ Վարդ-Րէսլի կ'կանչեն այդ երեխային, քանի որ նա կենդանի է:

Վ Ե Ր Ջ



| | |
|---|-------|
| | Թ. Գ. |
| 11. Ուխտաւորք, դերձ Վիլհէլմ Հաուֆի. . . | — 75 |
| 12. Գառնուկ եւ Լուսատոնիկ, վէպեր Քրիստափոր Շմիդտի, թարգմ. Նուարդ. . . | — 25 |
| 13. Սայեաթ Նօվա ազգային երգիչ. . . | — 5 |
| 14. Ծննդեան պատմութիւնը եւ Մայիսեան տօնը Ֆինլիանդիայում. | — 10 |
| 15. Ազաթանգեղեայ պատմութիւն | 1 — |
| 16. Գիւղական Խալիֆայ, Ա. Արարատեանցի | — 50 |
| 17. Վանայ Սագ, պ. Գ. Շէրենցի | — 75 |
| 18. Փնջիկ, գրեց Աղէքսանդր Արարատեանց | — 20 |
| 19. Նամուս, վէպ. գրեց Շիրվանզադէ | 1 — |
| 20. Ստեփաննոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական. երկը. տպ. | 2 — |
| 21. Թիֆլիզեցոց մտաւոր կեանքը. Տէր-Աղէքսանդրեանի. | 1 — |
| Նոյնը ընտիր թղթի վրայ | 1 50 |
| 22. Վեռնդ պատմագիր. | 2 — |
| 23. Սրբազան պատմ. հին ուխտի, Սահակ քնն. Սահակեանի. | — 30 |
| 24. Նոյնը ուսուցիչների համար | 1 75 |
| 25. Սոկրատէս, թարգմ. օր. Թեկղի Ստեփոյեան. | — 10 |
| 26. Պատմ. Հայոց, Ս. Պարտանեանի. | 1 50 |
| 27. Ուղեցոյց Շերամապահութեան, Մելիք-Շահնազարեանցի | — 40 |
| 28. Ժամանակագրութիւն Հայոց, Յ. Դարդեկի. | 1 25 |

Նոյն տեղերում վաճառվում են նաև ընկերութեան
հետևեալ գրքերը.—

1. Աւսումնարանների առողջապահութեան
հարցեր, բժ. Ա. Բարայեանի. . . . 1 —
2. Կրքեր և նոցա ազգեցութիւնը առող-
ջութեան վրայ, բժ. Ա. Բարայեանի. — 30
3. Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի. . . 2 —
4. Թորոս Լեոնի, Մերկնցի. . . . 1 —
5. Թէոփորոս Ռչաունի, Մերկնցի 1 —
6. Երկունք Թ. դարու, Մերկնցի 1 —

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

1524

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1388755

